ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ 150-ԱՄՅԱԿԸ

ԴԵԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Զ. Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ցրտաշունչ Նևայի ափին, Պետերբուրգում 1825 թ. մառախլապատ դեկտեմբերի 14-ին ռուս առաջին հեղափոխականները ապստամբության դրոշ պարզեցին ցարիզմի դեմ։ Եվ թեպետ այդ խիզախների համարձակ փորձը արյան մեջ խեղդվեց, բայց և ազդարարեց Ռուսաստանի հեղափոխական ազատագրական շարժումների սկիզբը և իր կնիքը դրեց ռուսական կյանքի հետագա ողջ ընթացքի վրա։

Վ. Ի. Լենինը, տալով Ռուսաստանի ազատագրական շարժումների գիտական պարբերացումը, այն բաժանել է երեք փուլի՝ ազնվականական (1825—1861), ռազնոչինական կամ բուրժուա-դեմոկրատական (1861—1895) և պրոլետարական։ «Ազնվականական ժամանակաշրջանի ամենաականավոր գործիչները դեկաբրիստներն ու Գերցենն էին»[1],— գրում է Վ. Ի. Լենինը։

Դեկաբրիստական շարժումը արդյունք էր Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և բաղաքական կյանքի օրինաչափ զարգացման։ Ճորտատիրական տնտեսության ճգնաժամի սրումը և բուրժուական հարաբերությունների զարգացումը, ճորտ գյուղացու աշխատանքի ոչ շահավետությունը լիբերալորեն տրամադրված կալվածատերերին դրդում է իրենց տնտեսությունը փոխադրել կապիտալիստական եղանակով վարելու ճանապարհը։

Արտադրողական ուժերի զարգացման պրոցեսը առավել նկատելի է դառնում արդյունաբերության ոլորտում։ Նշմարելի զարգացում է ապրում մանուֆակտուրային արտադրությունը։ XIX դարի առաջին տասնամյակներին զգալիորեն ուժեղանում են Ռուսաստանի առևտրա-տնտեսական կապերը արևմուտքի և արևելքի երկրների հետ։

Նույն ժամանակահատվածում նկատելի փոփոխություններ են կատարվում Ռուսաստանի բնակչության սոցիալական կազմում։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով ծնունդ առան սոցիալական բոլորովին նոր խավեր՝ սկսվեց պրոլետարիատի և առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի սաղմնավորման պրոցեսը։

Ազնվականական շրջաններից դուրս եկան առաջավոր մարդիկ, որոնք նոր զարգացող արտադրողական ուժերի ու հին արտադրական հարաբերությունների միջև խորացող անհամապատասխանության վերացման միջոց էին համարում ճորտատիրական իրավունքի ոչնչացումը և կապիտալիստական

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 297։*

հարաբերությունների արմատավորումը։ Այսպիսով, դեկաբրիստական շարժման գլխավոր նախադրյալ հանդիսացավ XIX դարի առաջին քառորդին Ռուսաստանում ֆեոդալական-ճորտատիրական հասարակարգի ճգնաժամի խորացումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը։

Դեկաբրիստական շարժման մյուս նախադրյալը դա երկրում սոցիալական հակամարտությունների և դասակարգային պայքարի ուժեղացումն էր։ 1812 թ. Հայրենական պատերազմի ավարտից և մասնավորապես Եվրոպայի միապետների ռեակցիոն միության՝ «սրբազան դաշինքի» կնքումից հետո Ռուսաստանի ներքին կյանքի բոլոր ասպարեզներում սկսում է իշխել «արակչեևականություն», որը ոստիկանական բռնապետության և բիրտ դինվորականության միաձուլումն էր։ Առավել սաստկացավ առանց այդ էլ կատարյալ թշվառության հասած գյուղացիության տնտեսական ու իրավական վիճակը։

Ի պատասխան երկրում մոլեգնող արակչեևյան բռնությունների, գնալով ուժեղանում են ժողովրդական շարժումները։ Պաշտոնական վիճակագրության տվյալներով 1813—1825 թթ. արձանագրվել է գյուղացիական ելույթների 540 դեպք։ Այդ տարիներին ելույթներ են ունենում նաև Կազանի, Մոսկվայի նահանգի, Ուրալի արդյունաբերական ձեռնարկությունների ճորտ բանվորները։

Ազատամիտ, հեղափոխական տրամադրությունները թափանցում են ցարական բանակ, այդ թվում նաև դվարդիական գորամասերը։

Այսպիսով, 1812 թ. Հայրենական պատերազմին հաջորդած տասնամյակում Ռուսաստանում հանդես եկան հեղափոխական իրադրության տարրեր։ Սակայն հեղափոխական շարժման համար գյուղացիությունը զեկավար չուներ, պրոլետարիատը որպես դասակարգ դեռևս չէր ձևավորվել, իսկ բուրժուազիան խիստ թույլ էր և ոչ հեղափոխական։ Ուստի շարժման զեկավարությունը իրենց ձեռքն են վերցնում ազնվականական հեղափոխականները։

Դեկաբրիստների գաղափարախոսությունը նույնպես ձևավորվեց ռուսական իրականության պայմաններում։ Սրա վրա խոր ազդեցություն գործեցին Ռադիշչևի և ռուս մյուս լուսավորիչների հայացքները, ինչպես նաև առաջավոր գրողների ստեղծագործությունները։

Դեկաբրիստների գաղափարախոսության ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցավ 1812 թ. Հայրենական պատերազմը, երկրում հորդացող հայրենասիրական շարժումը։ Դեկաբրիստները իրենց կոչում էին «1812 թվականի որդիներ»։

Եվ վերջապես, ռուսական կյանքը մեկուսացած չէր Արևմտյան Եվրոպայի առաջավոր հասարակական-քաղաքական մտքից և լուսավորական շարժումից։ Ազնվականական միջավայրից դուրս եկած հեղափոխական գործիչներին հետաքրքրում են նաև Արևմտյան Եվրոպայում վերելք ապրող հեղափոխական-ազատագրական շարժումները, այնտեղ հասարակական, քաղաքական, լուսավորական շարժման բնագավառներում կուտակված հարուստ և ուսանելի փորձը։

Ապագա դեկաբրիստներից շատերը, 1813—1814 թթ. արտասահմանյան արշավանքի ժամանակ լինելով ռուսական բանակի կազմում, մոտիկից ծանոթացան եվրոպական ականավոր լուսավորիչների հայացքներին։ Միաժա-

մասակ, Արևմտյան Եվրոպայում նրանք ականատես եղան թագավորների գահընկեցությունների և սահմանադրությունների ընդունմանը։

Անտարակույս, ապագա դեկաբրիստների հետաքրքրությունը Արևմտյան Եվրոպայի քաղաքական կյանքի նկատմամբ ամենևին էլ չի նշանակում, թե դեկաբրիստական շարժումը կորցնում է յուր ինքնօրինակությունը, կամ այդ շարժումը «ներ է մուծվել դրսից», ինչպես ցանացել է ներկայացնել ցարական պաշտոնական պատմագրությունը։ Դեկաբրիստների հետաքրքրությունը դեպի արևմտյան իրականությունը նպատակ է հետապնդել օգտագործել համաշխարհային փորձը՝ Ռուսաստանի պատմական զարգացման ընթացքը լուրովի լուծելու համար։

Սրանք էին այն հիմնական գործոնները, որոնց հիմքի վրա հանդես եկավ դեկաբրիստական շարժումը։

* * *

1816 թ. փետրվարին, Ռուս ազատամիտ սպաները Պետերբուրգում հիմնում են մի գաղտնի խմբակ՝ «Փրկության միություն» անունով, որն իր ծրագիր-կանոնագրության ընդունումից հետո («Ստատուտ»—1817 թ. սկիզբ) վերանվանվեց «Հայրենիքի հարազատ ու հավատարիմ որդիների ընկերություն»։ «Փրկության միության» հիմնադրումով կազմակերպչորեն սկիզբ դրվեց դեկաբրիստական շարժմանը։

«Փրկության միությունը» հիմնեց գվարդիայի շտաբի գնդապետ Ալեքսանդր Մուրավյովը։ Միության հիմնադիր անդամներից էին գվարդիայի սպաներ Սերգեյ Տրուբեցկոյը, Մատվեյ և Սերգեյ Մուրավյով-Ապոստոլ եղբայրները, Նիկիտա Մուրավյովը, Իվան Յակուշկինը։ 1816 թ. վերջերին Միության մեջ մտան Պավել Պեստելը, Իվան Պուշչինը, Միխայիլ Լունինը։ Շուտով Միության անդամների թիվը հասավ 30 մարդու։ Սրանք բոլորն էլ պատկանում էին ազնվականական առաջադեմ երիտասարդությանը։

«Փրկության միությունը» իր գլխավոր խնդիրն էր համարում Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումը, բացարձակ միապետության տապալումը և սահմանադրական կարգերի հաստատումը։ Սակայն իր առջև դրված նպատակին հասնելու համար նա չուներ միասնական տակտիկական գիծ։ Միության պահպանողական թևը կառչում է խաղաղ ռեֆորմների միջոցին, իսկ ավելի արմատական թևը առաջ է քաշում վճռական պայքարի անհրաժեշտությունը։

1817 թ. աշնանը ցարական արքունիքը որոշ ժամանակով փոխադրվում է Մոսկվա՝ 1812 թ. Հայրենական պատերազմին նվիրված հուշարձանի հիմնադրման կապակցությամբ։ Մոսկվա է փոխադրվում նաև գվարդիան։ Որպես գվարդիայի սպաներ Մոսկվա փոխադրվեցին «Փրկության միության» անդամներից շատերը։ Նրանց Մոսկվայում գտնվելու ընթացքում Միության երկու թևերի միջև գոյություն ունեցող տարաձայնությունները բավականաչափ սուր բնույթ են ստանում։

Միության ներսում ստեղծված իրադրությունը անհրաժեշտ դարձրեց նրա վերակազմումը։ Թեժ պայքարի պրոցեսում, 1818 թ. ծնունդ առավ «Կանաչ գիրք» անունով դեկաբրիստական նոր ծրագիր-կանոնագրությունը («Կանաչ գիրք» կոչվեց կազմի գույնով)։ Նրա շուրջը համախմբված դեկաբրիստները

իրենց կազմակերպությունը կոչեցին՝ «Բարօրության միություն»։ Այսպիսով, «Փրկության միությունը» եկավ փոխարինելու «Բարօրության միությունը»։ Նրա անդամների թիվը հասավ 200 մարդու։ Միության կենտրոնական ղեկավարությունը գտնվում էր Պետերբուրգում և կոչվում էր «հիմնական ուղղավա» (վարչատուն)։ Միությունն ուներ իր մասնաճյուղերը՝ տեղական «ուղղավաները»՝ Մոսկվայում, Քիշինևում, Տուլչինում և այլուր[2]։

Սկսած 1820 թ. «Բարօրության միությունը» նշմարելիորեն ձախանում է։ Հատկապես ուժեղանում է Պ. Պեստելի ազդեցությունը։ Վերջինս առաջ է քաշում միապետության տապալման և հանրապետական կարգերի հաստատման անհրաժեշտությունը։

Միության ձախացմանը մեծ չափով նպաստեցին երկրում ծավալվող ժողովրդական-դյուղացիական շարժումները, հուզումները բանակում և մասնավորապես 1820 թ. հոկտեմբերին Սեմյոնովյան գվարդիական գնդի խռովությունը։ Դեկաբրիստներին պայքարի են ոգեշնչում նաև Իսպանիայում, Պորտուգալիայում, Նեապոլիտանիայում 1820 թ. տեղի ունեցած դինվորական հեղափոխությունները։

«Բարօրության միության» առավել հեղափոխականացման պրոցեսը անհրաժեշտություն է դարձնում արմատական փոփոխություններ կատարել Միության կառուցվածքում, ծրագրում և տակտիկայում։ Իսկ վերջինս տեղիք է տալիս նոր մտահղացումների, որոնումների, վեճերի և տարաձայնությունների։ Հասունանում է Միության համագումար հրավիրելու անհրաժեշտությունը։

1821 թ. հունվարին Մոսկվայում Ֆոնվիզինի բնակարանում կայանում է «Բարօրության միության» հիմնական ուղղավայի համագումարը՝ տեղական ուղղավաների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այստեղ փոթորկալից վեճեր տեղի ունեցան Միության հետագա գործունեության կապակցությամբ։ Առավել արմատական հայացքներ ունեցողները պահանջում էին Միությունը լուծարքի ենթարկել և ստեղծել նոր, ավելի մարտունակ գաղտնի կազմակերպություն։ Միաժամանակ նրանք գտնում են, որ «Բարօրության միության» լուծարքի միջոցով հնարավոր կլինի ազատվել կազմակերպության մեջ ներթափանցած տատանվող ու անբարեհույս մարդկանցից։ Պահպանողական թևի ներկայացուցիչները նույնպես կողմ էին Միության լուծարքին, որպեսզի այդ միջոցով ազատվեին «տաք գլուխներից», ինչպես նրանք կոչում էին արմատական հայացքներ ունեցողներին։ Եվ, վերջապես, Միության լուծարքը պաշտպանում էին երկու կողմերն էլ, որովհետև հայտնի է դառնում, որ ոստիկանությունը տեղեկացել է համագումարի մասին և հետևում է նրա մասնակիցներին, հետևապես Միության հետագա գոյությունը լրջորեն վտանգված է։

Այսպիսի իրադրության թելադրանքով համագումարը «Բարօրության միությունը» պաշտոնապես հայտարարեց լուծարքի ենթարկված։ Դրանից հետո հիմնադրվեցին դեկաբրիստական երկու նոր խոշոր կազմակերպություններ՝ Հարավային և Հյուսիսային ընկերությունները։

---

2 Տե՛ս М. В. Нечкина. Движение декабристов, т. I, М., 1955, էջ 222։

«Բարօրության միության» Տուլչինի ուղղավայի հիմքի վրա, 1821 թ. մարտին հիմնադրվեց դեկաբրիստների Հարավային ընկերությունը: Նրա ղեկավարն էր գնդապետ Պ. Պեստելը, որը ծառայում էր հարավային երկրորդ բանակում: Պավել Իվանովիչ Պեստելը (1793—1826) դեկաբրիստական շարժման ամենաականավոր գործիչներից մեկն էր: Նա իր ժամանակի Ռուսաստանի զարգացած ու խելացի մարդկանցից էր, դեկաբրիստական շարժման արմատական թևի առաջնորդն ու գաղափարախոսը:

Միության ղեկավար գործիչներից էին՝ Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը, Մ. Բեստուժև-Ռյումինը, Յուշնևսկին, Բարյատինսկին, Վոլկոնսկին, Դավիդովը և ուրիշներ:

Հարավային ընկերությունում ծնվեց Պ. Պեստելի ձեռքով գրված դեկաբրիստական շարժման ծրագրային նշանավոր փաստաթուղթը՝ «Ռուսկայա պրավդան»[3]՝ ապագա Ռուսաստանի սահմանադրության նախագիծը:

«Ռուսկայա Պրավդան» առաջադրում է ճորտատիրական իրավունքի անհապաղ ոչնչացման և գյուղացիներին հողով ապահովելու պահանջ: Նա Ռուսաստանի օգտագործվող հողը բաժանում է երկու մասի. առաջինը «հասարակական հողն» էր, որը լինելու էր վոլոստի սեփականությունը: Նրանից կարող էին օգտվել տվյալ վոլոստի այն քաղաքացիները, որոնք կցանկանային զբաղվել երկրագործությամբ: Ռուսաստանի ընդհանուր հողային ֆոնդի երկրորդ մասը Պեստելը կոչել է «մասնավոր հող»: Նրան տիրելու իրավունք ունեին բոլոր քաղաքացիները՝ վաճառելու, կապալով տալու, ժառանգելու իրավունքով:

«Ռուսկայա պրավդան» վճռականորեն առաջադրում է միապետության տապալման և հանրապետական կարգերի հաստատման պահանջ: Համապատասխանորեն շարադրված են տեղական և կենտրոնական իշխանության օրգանների ստեղծման կարգը և նրանց ֆունկցիաները:

«Ռուսկայա պրավդան» նախատեսում է դասայնության վերացում, բոլոր քաղաքացիների հավասար իրավունք օրենքի առաջ, ընդհանուր ընտրական իրավունք առանց գույքային և կրթական ցենզի, 18 տարին լրացած ռուսահպատակ բոլոր տղամարդիկ ստանալու էին քաղաքացիական իրավունք:

Իր ծրագրի իրագործման միջոց Պ. Պեստելը համարում էր պետական հեղաշրջումը, որը, սակայն, պետք է կատարվեր բացառապես զորքի միջոցով: Պետական հեղաշրջման խնդիրն էր միապետության տապալումը և ժամանակավոր կառավարության ստեղծումը, որը 10—12 տարիների ընթացքում նախապատրաստելու էր անցումը բուրժուական հանրապետական կարգերի:

Դեկաբրիստների մյուս նշանավոր կազմակերպությունը Հյուսիսային ընկերությունն էր, որը սաղմնավորվեց Մոսկվայի համագումարից անմիջապես հետո, բայց վերջնականապես ձևավորվեց 1822 թ. աշնանը՝ Պետերբուրգում:

Միության ղեկավարներից ու ազդեցիկ գաղափարախոսներից էր Նիկիտա Միխայլովիչ Մուրավյովը: Նա բազմակողմանի զարգացած մարդ էր, մեծ հակում ուներ դեպի պատմության, ինչպես և ռազմական տեսության հարցերը:

---

3 Տե՛ս «Восстание декабристов. Материалы. Документы. Следственные дела», т. VII, М.—Л., 1958.

Ն. Մուրավյովի գրչին է պատկանում Միության ծրագիրը՝ Ռուսաստանի ապագա սահմանադրության նախագիծը, որը պատմության մեջ մտել է Ն. Մուրավյովի «Սահմանադրություն»[4] անունով։

Ն. Մուրավյովն իր «Սահմանադրությունում» նույնպես առաջադրում է ճորտատիրական իրավունքի վերացման պահանջ, սակայն առանց հողի։ Միայն Միության անդամների ճնշման տակ «Սահմանադրության» հետագա տարբերակներում, այդ կետը վերափոխելով, նախատեսում է գյուղացիներին ազատագրել տնատեղով և երկու դեսյատին վարելահողով։ Մնացած ամբողջ հողը մնալու էր կալվածատերերին։

Նա առաջարկում է բացարձակ միապետությունը փոխարինել սահմանադրական միապետությունով։ Թագավորը պետք է զրկվեր օրենսդիր իրավունքներից և մնար որպես պետության գերագույն չինովնիկ՝ ներկայացնելով երկրի գործադիր իշխանությունը։

Ն. Մուրավյովը նախատեսում էր Ռուսաստանը բաժանել 13 շտատների (նահանգ) և երկու մարզի (Մոսկվայի և Դոնի)։ Շտատներից և մարզերից կազմվելու էր ֆեդերացիա։ Երկրի կառավարումը վերևից մինչև ներքև իրագործվելու էր ընտրովի օրգանների միջոցով։ Սակայն ընտրական իրավունքը խարսխվելու էր գույքային բարձր ցենզի վրա։ Ընտրական իրավունքից օգտվելու էին 21 տարին լրացած տղամարդիկ։

Ինչպես Պ. Պեստելի «Ռուսկայա պրավդայում», այնպես էլ Ն. Մուրավյովի «Սահմանադրությունում» ռուսական քաղաքացիների համար նախատեսվում էր սեփականության անձեռնմխելիության իրավունք, դավանանքի, տեղաշարժի, խոսքի, մամուլի ազատություն, զինվորական բնակավայրերի վերացում, զինվորական ծառայության ժամկետի կրճատում և ընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն։

Հյուսիսային ընկերության ներսում կար մի ազդեցիկ խումբ (Ռիլեև, Նիկոլայ, Ալեքսանդր, Միխայիլ Բեստուժևներ, Օրոլենսկի, Կախովսկի, Յակուբովիչ և ուրիշներ), որը հակված էր դեպի Պեստելի «Ռուսսկայա պրավդան» և ներկայացնում էր Հյուսիսային ընկերության առավել արմատական, դեմոկրատական հայացքները։

Թեև Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը» Ռուսաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում արմատական վերափոխումների պահանջ էր առաջադրում, բայց նա չափավոր էր, քան Պ. Պեստելի «Ռուսսկայա պրավդան»։ Չափավոր էին նաև Ն. Մուրավյովի տակտիկական սկզբունքները։ Նա առավելապես կողմ էր «մտքի և գործի վրա ներազդելու» խաղաղ տակտիկային։ Այս բոլորով հանդերձ, Ն. Մուրավյովի «Սահմանադրությունը» նույնպես դեկաբրիստական շարժման ծրագրային նշանավոր փաստաթղթերից մեկն է՝ ուղղված բացարձակ միապետության և ճորտատիրական իրավունքի դեմ։

Դեկաբրիստական կազմակերպություններից էր նաև Միացյալ սլավոնների ընկերությունը։ Այն սաղմնավորվել էր 1818 թ. Պոլտավայի նահանգի Ռեշետիլովկա ավանում և որպես քաղաքական կազմակերպություն վերջնականապես ձևավորվել 1823 թ.։ Նրա հիմնադիր գործիչներից էին կրտսեր

---

[4] Տե՛ս Н. Дружинин, Декабрист Никита Муравьев, М., 1933.

սպաներ Պյոտր և Անդրեյ Բորիսով եղբայրները, Վոլկովը և Ռուսաստանի հարավ աքսորված լեհ հեղափոխական Լյուբլինսկին։ Միության մեջ առաջին ընդունվածներից էին Ա. Բեչասնովը, Պ. Վիդոդովսկին, Ի. Դորբաչևսկին։

«Միացյալ սլավոնների ընկերությունը» առաջադրեց դյուղացիության ապատադրում՝ հողով, միապետության կործանում և սլավոն ժողովուրդների դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետության ստեղծում։ Նախատեսվող ֆեդերացիան ընդգրկելու էր Սպիտակ, Բալթիկ, Ադրիատիկ և Սև ծովերի միջև ընկնող տերիտորիան։

Սլավոնական միացյալ հանրապետություն ղեկավարելու էր ընդհանուր ընտրական իրավունքով ընտրված «Դերագույն ժողովը», որը առաջնորդվելու էր սահմանադրությամբ։ Ֆեդերացիայի մեջ մտնող յուրաքանչյուր հանրապետություն օգտվելու էր ինքնավար ընդարձակ իրավունքներից, ունենալու էր իր սահմանադրությունը և կառավարող մարմինները։ Միությունը դեմ էր նեղ զինվորական հեղաշրջմանը, նա առաջադրում էր ժողովրդին օգտագործելու անհրաժեշտությունը։

«Միացյալ սլավոնների ընկերությունը» ոչ միայն իր ծրագրային սկզբունքներով էր դեկաբրիստական շարժման ամենադեմոկրատական թևը, այլև իր կազմով։ Նրա անդամներն ունեին զինվորական ցածր աստիճան. նրանք քայքայված ազնվականներ էին։ «Միացյալ սլավոնների ընկերությունը» 1825 թ. աշնանը ձուլվեց դեկաբրիստների «Հարավային ընկերության» հետ, դառնալով նրա «սլավոնական ուղղվածը»։

* * *

Դեկաբրիստները, մշակելով ապստամբության նախնական պլան, ծրագրում էին այն իրագործել 1826 թ. օգոստոսին, երբ հարավային բանակի վարժախաղերը դիտելու համար Բելայա Ցերկով էր գալու Ալեքսանդր I-ը։ Ապստամբությունն սկսելու ազդանշան էր լինելու թագավորի սպանությունը։ Սակայն դեպքերի հետագա ընթացքը ի չիք դարձրեց այդ պլանը։

1825 թ. նոյեմբերի 19-ին Տագանրոգում վախճանվում է Ալեքսանդր I-ը։ Նրա մահից հետո որոշ ժամանակ պարզ չէր, թե նրա երկու եղբայրներից ով է գահ բարձրանալու՝ Կոնստանտինը, թե Նիկոլայը։ Ստեղծվեց զինաստիական ճգնաժամ։ Այս նպաստավոր իրադրությունն օգտագործելով, դեկաբրիստների «Հյուսիսային ընկերության» ղեկավարությունը Պետերբուրգում դեկտեմբերի 14-ին ցարիզմի դեմ ապստամբություն կազմակերպեց։ Այդ օրը առավոտյան դեկաբրիստական գնդերը սկսեցին գալ Սենատի հրապարակ։ Այստեղ հավաքվեցին ապստամբած շուրջ 3000 զինվոր և 30 սպա։

Խուճապի մատնված Նիկոլայը, որն արդեն տիրել էր գահին, մի քանի փորձ կատարեց համոզելու դեկաբրիստներին, որ իրեն հավատարմության երդում տան։ Բայց նրանք վճռականորեն մերժեցին այդ առաջարկությունը։ Կախովսկին նույնիսկ մահացու վիրավորեց բանակցություններ վարողներից Պետերբուրգի գեներալ-նահանգապետ Միլորադովիչին։ Լսելով ապստամբության լուրը, Սենատի հրապարակի մոտ հավաքվում են մեծ քանակությամբ արհեստավորներ, օրավարձով աշխատող բանվորներ, աշխատանք ճարելու նպատակով Պետերբուրգ եկած գյուղացիներ, ուսանողներ,

մանր չինովնիկներ և աշխատավորական խավերին պատկանող այլ մարդիկ։ Նրանք վիրավորական խոսքեր են շպրտում Նիկոլայի հասցեին, արտահայտելով ապստամբներին օգնելու իրենց պատրաստակամությունը։ Հրապարակում, Իսակիևյան տաճարը կառուցող բանվորները քարեր ու փայտի կտորներ են նետում Նիկոլային հավատարիմ զորքերի վրա։ Սակայն, դժբախտաբար, ապստամբության ղեկավարները ժողովրդին օգտագործելու համարձակություն և վճռականություն հանդես չբերեցին։ Այս վճռական պահին նույնպես շեշտված ձևով արտահայտվեց դեկաբրիստների դասակարգային սահմանափակվածությունը, նրանց վախը ժողովրդից։

Օգտվելով դեկաբրիստների անվճռականությունից և թույլ տված սխալներից, Նիկոլայ I-ը ժամանակ շահեց ու Սենատի հրապարակ բերեց կառավարությանը հավատարիմ զորք և հրետանային արկերի ու մանրագնդակների տեղատարափ կրակով ուշ երեկոյան արյան մեջ խեղդեց դեկտեմբերի 14-ի ապստամբությունը։

Սենատի հրապարակի ապստամբության լուրը դեկաբրիստների Հարավային ընկերությանը հասավ դեկտեմբերի 25-ին, երբ այստեղ արդեն սկսվել էին բանտարկությունները։ Դեռևս դեկտեմբերի 13-ին մատնությամբ բանտարկվել և Պետերբուրգ էր ուղարկվել Պ. Պեստելը։ Ապա բանտարկվեցին Տուլչինի ուղրավայի մյուս անդամները։ Դեկտեմբերի 25-ին բանտարկվեց Վասիլկովի ուղրավայի ղեկավար Սերգեյ Մուրավյով-Ապոստոլը և ուրիշներ։ Այլևս դանդաղել չէր կարելի։ Ուստի Չերնիգովյան գնդում ծառայող «Միացյալ սլավոնների միության» անդամների ջանքերով բանտից ազատվում է Ս. Մուրավյով-Ապոստոլը և դեկտեմբերի 29-ին, Բեստուժև-Ռյումինի հետ միասին Չերնիգովյան գունդը դուրս է բերում ապստամբության։ Դեկտեմբերի 31-ին Վասիլկովի հրապարակում ապստամբած գնդի առջև կարդացվեց Սերգեյ Մուրավյովի և Բեստուժև-Ռյումինի կողմից գրված «Կատեխիզիսը», որտեղ ընդգծված ձևով շեշտվում էին միապետության տապալման, հանրապետական կարգերի հաստատման, ճորտատիրական իրավունքի վերացման և դեկաբրիստների ծրագրային այլ սկզբունքները։

1826 թ. հունվարի 3-ին Չերնիգովյան գնդի վրա Տրիլես և Կովալյովկա գյուղերի մոտակայքում գրոհեց կառավարությանը հավատարիմ մնացած զորաջոկատը՝ գեներալ Գելմարի հրամանատարությամբ։ Ուժերը խիստ անհավասար էին և Գելմարին հաջողվեց ճնշել Չերնիգովյան գնդի ապստամբությունը։ Այսպիսով, անհաջող վախճան ունեցավ նաև դեկաբրիստների Հարավային ընկերության ապստամբությունը։

Նիկոլայ I-ը, որին ժողովուրդը նզովքով «Պալկին» մականունը կնքեց, դա բարձրացավ դեկաբրիստների դիակների վրայով։ Դեկտեմբերի 14-ի գիշերվանից սկսվում են դեկաբրիստների մասսայական ձերբակալությունները։ Նրանց նախնական հարցաքննություններին գործուն մասնակցություն է ունենում ինքը՝ Նիկոլայ I-ը։

Դեկաբրիստների գործը հետաքննելու համար դեկտեմբերի 17-ից Պետերբուրգում սկսեց գործել հատուկ հետաքննող հանձնաժողով։ Ցարական սատրապները գաժան միջոցների դիմեցին՝ ջանալով հարկադրել դեկաբրիստներին, որպեսզի ընդունեն, թե իրենք «դավադիրներ» և «հայրենիքի դավաճաններ» են։ Սակայն նրանք վճռականորեն մերժելով այդ հերյուրանքները, հա-

մարձակորեն պաշտպանում էին ճորտատիրական իրավունքի վերացման և իշխանակալության տապալման իրենց հեղափոխական ծրագիրը։

Կախովսկին, Նիկոլայ I-ի այն հարցին, թե նա «արդյո՞ք կամեցել է սպանել թագավորին», պատասխանում է. «Այո՛, և ավելին, որ այդ չեմ կատարել»։ Կ. Ռիլևը բանտում անագե ափսեի վրա մեխով գրում է հետևյալ քառյակը.

Բանտը պատիվ է ինձ և ոչ անարգանք.
Արդար գործի դատն է բերել ինձ այստեղ,
Ամո՞թ համարեմ շղթան ու կապանքը,
Ներ կրում եմ, ի՛մ հայրենիք, ինձ համար։

Դեկաբրիստական շարժմանն իր հարելու դրդապատճառների մասին Պ. Պեստելը բանտից ծնողներին գրում է. «Ես ջերմորեն սիրել եմ իմ հայրենիքը և պատանեկան խանդավառությամբ ցանկացել եմ նրա երջանկությունը»։

Այսպիսի համոզմունքներով էր, որ ռուս առաջին հեղափոխականները սկզբնավորեցին դեկաբրիստական շարժումը։ Ապստամբության ճնշումից հետո նույն համոզմունքներին հավատարիմ նրանք գնացին բանտ, աքսոր, կախաղան։

Դեկաբրիստների ապստամբությանը մասնակցելու համար բանտարկված 3000 մարդուց (500 սպա և 2500 զինվոր)[5] հետաքննությունից հետո դատի հանձնվեց 121 մարդ (բաժանելով 11 խմբի), որոնց միջին տարիքը հազիվ հասնում էր 27-ի։ Մեղադրյալներին, ըստ հարուցված մեղադրանքի, դատարանը բաժանում է երեք կարգի («թագավորասպաններ», «դավադիրներ», «զորային խռովարարներ») և ենթարկում պատժի տարբեր չափի։ Պ. Պեստելը, Ս. Մուրավյով-Ապոստոլը, Մ. Բեստուժև-Ռյումինը, Պ. Կախովսկին և Կ. Ռիլևը (որոնք սահմանված 11 խմբից դուրս էին ճանաչվել) 1826 թ. հուլիսի 13-ի գիշերը Պետրոպավլովյան բերդի ամրաբուրգի վրա կախաղան բարձրացվեցին։ Մյուսները զրկվեցին ազնվականական կոչումներից ու զինվորական աստիճաններից և աքսորվեցին Սիբիր տաժանակրության։ Մի մասն էլ ուղարկվեց հեռավոր կայազորները և գործող բանակները՝ որպես շարքային զինվորներ։

Այն գվարդիական գնդերի վաշտերից, որոնք մասնակցել էին Սենատի հրապարակի ապստամբությանը, ձևավորվեց լեյբ-գվարդիայի Հավաքական գունդը (1287 մարդ, որից 38 սպա) և ուղարկվեց Կովկաս։ Կովկասյան հատուկ կորպուս ուղարկվեցին նաև դեկտեմբերի 14-ի ապստամբությանը մասնակցած գվարդիական նավաստիների մի խումբ և Չերնիգովյան գնդի ապստամբությանը մասնակցած զինվորները։ 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Սիբիր և Ռուսաստանի այլ վայրեր աքսորված դեկաբրիստների մեծ մասին նույնպես փոխադրեցին Կովկասյան կորպուս։ Նրանք եղան նաև Հայաստանում և իրենց գործուն մասնակցությունը բերեցին Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու համար մղված պատերազմական գործողություններին[6]։

---

5 Տե՛ս М. В. Нечкина, նշվ. աշխ., հատ. II, էջ 394։

6 Տե՛ս Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։ Զ. Երիցոյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։

* * *

Թեպետ Նիկոլայ I-ը արյան մեջ խեղդեց դեկաբրիստական շարժումը, բայց դեկաբրիստների գաղափարները շարունակեցին ապրել, դրանք ջերմորեն պաշտպանեցին Ռուսաստանի առաջավոր մարդիկ։ Պուշկինն իր հաստատ համոզմունքը հայտնեց, որ կգա այն օրը, երբ իրականություն կդառնան դեկաբրիստների երազանքները։ «Աքսորյալ դեկաբրիստներին» բանաստեղծության մեջ նա գրում էր.

Հպարտ ապրեցեք, ով ամսուրյալներ,
Խավար հանքերում հեռու Սիբիրի.
Չի կորչի իզուր աշխատանքը ձեր
Ու ձգտումները ձեր վեհ մտքերի.
Եվ կընկնեն մի օր շղթաները ձեր,
Բանտը կդառնա խղնուկ ավերակ,
Ազատությունը դեմ կվազի ձեզ
Ու ընկերներից սրեր կստանաք։

Իրենց գաղափարների հաղթանակի հանդեպ ունեցած նույնպիսի հաստատ հավատով աքսորված դեկաբրիստների անունից Պուշկինին պատասխանում է Ա. Օդոևսկին։ Նրա բանաստեղծության «կայծից բոց կբռնկի» խոսքերը Վ. Ի. Լենինը դարձրեց «Իսկրա» թերթի բնաբանը։

Դեկաբրիստների մտերիմ բարեկամներից ու գաղափարակիցներից էր ականավոր գրող Ա. Ս. Գրիբոյեդովը[7]։ Նրա ստեղծագործությունները ներծծված են դեկաբրիստների գաղափարներով։ Գրիբոյեդովի հռչակավոր «Խելքից պատուհաս» կատակերգության հերոսին՝ Չացկուն, Գերցենը կոչեց դեկաբրիստ։

Դեկաբրիստների նկատմամբ ուշ նշանավոր գրող Նեկրասովի ունեցած ջերմ համակրանքի վառ արտահայտությունն է նրա «Դեկաբրիստուհիներ» (կոչվել է նաև «Ռուս կանայք») պոեմը։

Թեև դեկաբրիստական ապստամբության ճնշումից հետո Ռուսաստանում մոլեգնում էր Նիկոլայևյան ռեակցիան, բայց շուտով խավարի թագավորության մեջ փայլատակեց լույսի ճառագայթը, կրկին աշխուժացավ Ռուսաստանի հասարակական-քաղաքական առաջավոր միտքը։ 1830—1840-ական թթ. հանդես եկան մի շարք հեղափոխական խմբակներ (Կրիտսկի եղբայրների, Սունգուրովի, Սոկոլովսկու, Բելինսկու, Գերցեն—Օգարյովի, Պետրաշևսկու), որոնք ջերմորեն պաշտպանում, զարգացնում ու առաջ են մղում դեկաբրիստների գաղափարները։

* * *

Դեկաբրիստական շարժումը պատմական խոշոր աղդեցություն ունեցավ Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական-քաղաքական մտքի և մշակույթի զարգացման վրա։

---

7 Տե՛ս M. B. Нечкина, Следственное дело о А. С. Грибоедове, М.—Л., 1945; նույնի՝ А. С. Грибоедов и декабристы, М., 1951.

Դեկտեմբերի 14-ի ապստամբությունով Ռուսաստանը թևակոխեց իր ազատագրական հեղափոխական շարժումների առաջին փուլը։ Իհարկե, դեռևս մինչև դեկաբրիստները Ռուսաստանում եղել են հակապետական, հակաճորտատիրական բազմաթիվ շարժումներ, որոնց մի մասը ստացել է մեծ ծավալ, ընդգրկել ժողովրդական լայն զանգվածներ և վերածվել զինված ապստամբությունների։ Այդպիսիք էին օրինակ՝ Ռազինի, Բոլոտնիկովի, Բուլավինի, Պուգաչովի գլխավորած ապստամբությունները։ Սակայն նրանցով չսկզբնավորվեցին Ռուսաստանի հեղափոխական, ազատագրական շարժումները, որովհետև այդ ապստամբությունները կրել են տարերային բնույթ, ընթացել են առանց վաղօրոք մշակված քաղաքական ծրագրերի ու պլանների։ Հիշատակված ապստամբությունների ժամանակ գյուղացիները, դուրս գալով կալվածատերերի դեմ, անկարող եղան ցարիզմի և ճորտատիրության դեմ առաջ քաշել հեղափոխական լոզունգներ, չդրեցին տիրող քաղաքական սիստեմի վերափոխման անհրաժեշտությունը։ Նրանք շարունակում էին հավատալ «բարի թագավորներին», դերի մնալով «նաիվ միապետության» հետամնաց գաղափարախոսությանը։

Դեկաբրիստները, որպես բարձրացող բուրժուական հասարակարգի մունետիկներ, առաջադրեցին Ռուսաստանի սոցիալ-քաղաքական կյանքը նոր սկզբունքներով վերափոխելու համարձակ ծրագիր, գիտակցական հեղափոխական գաղափարախոսություն։

Եվ, վերջապես, դեկաբրիստներն առաջինն էին, որ հիմնելով հեղափոխական կազմակերպություններ, դուրս եկան զինված ապստամբության՝ ընդդեմ ինքնակալության և ճորտատիրության։ Այս ամենի հետևանքով է, որ Վ. Ի. Լենինը Ռուսաստանի հեղափոխական ազատագրական շարժումները սկզբնավորել է դեկաբրիստների ապստամբությունով։

Դեկաբրիստական շարժումը խթանեց XIX դարի քաղաքական մտքի հասունացմանը և առաջ մղեց այն։ Դրանով իսկ դեկաբրիստները նպաստեցին ռուս ժողովրդի «արթնացմանը» և նախապատրաստեցին նրան ցարիզմի ու ճորտատիրության դեմ մղվող վճռական գոտեմարտերի։ Նրանց գաղափարները զարգացրին ու առաջ մղեցին հեղափոխական-դեմոկրատները՝ դառնալով Ռուսաստանի ազատագրական շարժումների երկրորդ փուլի գրոշակակիրները։

Դեկաբրիստական շարժումը, 1825 թ. դեկտեմբերի 14-ի և Չերնիգովյան գնդի ապստամբությունները Ռուսաստանի հետագա հեղափոխական սերունդների համար ծառայեցին որպես ուսանելի փորձ։ Դեկաբրիստներին հաջորդած հեղափոխական բոլոր սերունդներն էլ իրենց գործունեության ընթացքում հաշվի առան նրանց թույլ տված սխալները և ջանացին չկրկնել դրանք։ Մասնավորապես, դեկաբրիստների փորձը ակնառու կերպով ցույց տվեց, որ առանց ժողովրդական զանգվածների հեղափոխական ակտիվ մասնակցության հաղթանակը ցարիզմի դեմ անհնար է։

Չկա ռուսական ազգային մշակույթի որևէ բնագավառ, որ այս կամ այն չափով կրած չլինի դեկաբրիստական շարժման բարերար ազդեցությունը։ Դեկաբրիստների միջավայրից դուրս եկան գրողներ Կ. Ռիլեևը, Ա. Բեստուժև-Մարլինսկին, Ա. Օդոևսկին, Վ. Կյուխելբեկերը, Ե. Բարյատինսկին, Վ. Ռան-

8 Տե՛ս М. В. Нечкина, Движение декабристов, т. II, էջ 452։

սկին, Պ. Կատենինը և ուրիշներ, որոնք գրականության մեջ ստեղծեցին բոլորովին նոր ուղղություն, որը հայտնի է «դեկաբրիստական գրականություն» անունով։

Դեկաբրիստ գրողներ Կ. Ռիլեևը և Ա. Բեստուժև-Մարլինսկին 1823—1825 թթ. Պետերբուրգում հրատարակում են «Պոլյարնայա Զվեզդա» ալմանախը (լույս տեսավ երեք գիրք՝ 1823, 1824 և 1825 թթ.), որը փաստորեն դարձավ դեկաբրիստների լեգալ օրգանը։ «Պոլյարնայա Զվեզդայում» տպագրվում են Ա. Պուշկինի, Վ. Ժուկովսկու, Ի. Կռիլովի, Ա. Գրիբոյեդովի, Ն. Գնեդիչի, Դ. Դավիդովի, Պ. Վյազեմսկու և 1820-ական թթ. մյուս առաջավոր գրողների ստեղծագործությունները։ Դեկաբրիստ գրողները հարստացրին ու առաջ մղեցին XIX դարի ռուսական գրականությունը, նրան տալով քաղաքական-գաղափարական շեշտված հագեցվածություն։

Մեծ է դեկաբրիստների խաղացած դերը ռուսական պատմագիտության զարգացման գործում[9]։ Այս բնագավառում հատկապես արժեքավոր ներդրում կատարեցին Պ. Պեստելը, Ն. Մուրավյովը, Մ. Լունինը, Ն. Տուրգենևը, Ն. Բեստուժևը, Մ. Օրլովը, Վ. Սուխորուկովը, Ա. Կոռնիլովիչը, Ի. Բուրցովը, Ֆ. Գլինկան և ուրիշներ։ Ազնվականական պաշտոնական պատմագրության ականավոր ներկայացուցիչ Ն. Կարամզինի «Ռուսական պետության պատմությունը» լույս տեսնելուն պես, նրա առաջին քննադատները եղան դեկաբրիստները։ Ն. Մուրավյովը գրեց «Մտքեր Ն. Մ. Կարամզինի ռուսական պետության պատմության մասին» ծավալուն դիտողությունները, ուր քննադատում է բացարձակ միապետության և ճորտատիրական կարգերի իդեալականացման նրա կոնցեպցիան։ Դեկաբրիստ Ն. Տուրգենևը, քննադատելով Կարամզինի «Ժողովրդի պատմությունը պատկանում է թագավորին» գրությը, գրում է. «Ժողովրդի պատմությունը պատկանում է ժողովրդին և ուրիշ ոչ ոքի։ Ծիծաղելի է այն նվիրաբերել թագավորներին»[10]։ Անդրադառնալով պատմության մեջ ժողովրդի դերին, Ն. Բեստուժևը ասում է. «Մինչև այժմ պատմությունը գրել է միայն թագավորների և հերոսների մասին... Ժողովրդի մասին, նրա կարիքների, նրա բախտավորության կամ թշվառության մասին մենք անգիտակ ենք»[11]։

Մեծ է դեկաբրիստների ծառայությունը 1812 թ. Հայրենական պատերազմի պատմության գիտական լուսաբանման ու արժեքավորման գործում։

Դեկաբրիստները զգալիորեն նպաստեցին նաև փիլիսոփայության, ռազմական գիտության ու տեսության և մի շարք այլ գիտությունների զարգացմանը։ Նրանք իրենց մասնակցությունը բերեցին ռուսական կայսրության ժողովուրդների մշակույթի զարգացմանը։ Տաժանակրությունից ազատված և Սիբիրում բնակություն հաստատած դեկաբրիստները սերտ կապերով կապվեցին նրա ժողովուրդների հետ, այնտեղ դպրոցներ բացեցին, նպաստեցին կրթության գործին։ Կովկասյան հատուկ կորպուս աքսորված և փոխադրված դեկաբրիստները և նրանց «մեղսակիցները» կապեր են հաստատում հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների մշակույթի գործիչների հետ և

---

9 Տե՛ս С. Волк, Исторические взгляды декабристов, М.—Л., 1958.

10 Տե՛ս «Архив братьев Тургеневых», вып. V, 1921, էջ 115։

11 Տե՛ս Н. Бестужев, Статьи и письма, М.—Л., 1933, էջ 93։

նպաստում անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական կյանքի կազմակերպմանը։

Հիշատակության արժանի է այն, որ Երևանը պարսկական խաների դարավոր լծից ազատագրվելուց հետո (1827 թ. հոկտեմբերի 1), Կովկասյան հատուկ կորպուսում ծառայող, աստիճանաղրկված նախկին դեկաբրիստներ Ա. Գանդեբլովի և Պ. Կոնովնիցինի նախաձեռնությամբ հիմնվում է ռուս սպաներից կազմված մի խմբակ։ Նրա անդամները ծանոթանում են Հայաստանին, նրա հիասքանչ բնաշխարհին, նկարում զանազան բնապատկերներ, մասնավորապես վեհատեսիլ Արարատ և քառագագաթ Արագած լեռները։ Այս խմբակում քննարկվում և հավանության է արժանանում Ա. Ս. Գրիբոյեդովի հռչակավոր «Խելքից պատուհաս» կատակերգության ձեռագիրը։ Նույն խմբակի նախաձեռնությամբ Երևանի նախկին սարդարի պալատի հայելապատ դահլիճում, ռուս սպաների ուժերով տեղի ունեցավ «Խելքից պատուհասի» առաջին բեմադրությունը, որին ներկա էր նաև հեղինակը։ Դեկաբրիստների կողմից Երևանում այդպիսի խմբակի հիմնադրումը կարևոր երևույթ էր պարսկական խանական հետամնացության ու խավարի թմրությունը թոթափած Երևանի մշակութային կյանքում։

Այսպիսով, թեպետ ցարիզմին հաջողվեց արյան մեջ խեղդել դեկաբրիստական շարժումը, թեպետ այն ազնվականական հեղափոխականների շարժում էր, բայց շրջադարձային նշանակություն ունեցավ Ռուսաստանի համար։ Դեկաբրիստական շարժումն ակոսեց ռուսական կյանքի բոլոր ասպարեզները և բարերար խոշոր ազդեցություն գործեց Ռուսաստանի պատմական առաջընթացի վրա։

Վ. Ի. Լենինը, քննադատելով դեկաբրիստների դասակարգային սահմանափակվածությունը, ժողովրդից կտրվածությունը, ոչ հետևողականությունը, մասսայական զինված ապստամբության մերժումը և մյուս սխալներն ու վրիպումները, միաժամանակ ըստ արժանվույն է գնահատել դեկաբրիստների տեղը և խաղացած դերը Ռուսաստանի հեղափոխական շարժումների մեջ։ «1825 թվականին,— գրում է Վ. Ի. Լենինը,— Ռուսաստանն առաջին անգամ տեսավ հեղափոխական շարժում ցարիզմի դեմ, և այդ շարժումը ներկայացնողը գրեթե բացառապես ազնվականներն էին»[12]։

«Վելիկոռուսների ազգային հպարտության մասին» իր նշանավոր հոդվածում Վ. Ի. Լենինը ցասումնալից խոսքերով նշավակելով ժողովրդի նկատմամբ ցարիզմի գործադրած դաժան բռնությունները, միաժամանակ ազգային հպարտության բարձր զգացումով գրում է. «Մենք հպարտանում ենք նրանով, որ այդ բռնությունները մեր միջավայրից, վելիկոռուսների միջավայրից, հակահարված են առաջ բերել, որ այդ միջավայրն առաջ է քաշել Ռադիշչևին, դեկաբրիստներին...»[13]։ Նա պատշաճին է գնահատել դեկաբրիստների խաղացած դերը ճորտատիրական դարաշրջանի «ընկճված ու անշարժ» Ռուսաստանում ժողովրդի արթնացման գործում։ «...Ազնվականներից լավագույն մարդիկ օգնեցին զարթեցնելու ժողովրդին»[14],— գրել է Վ. Ի. Լենինը։ Հաստատ հավատով լի դեպի իրենց գաղափարները և Ռուսաստանի ապագան, դե-

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 320։

13 Նույն տեղում, հատ. 21, էջ 118։

14 Նույն տեղում, հատ. 19, էջ 403։

կաբրիստները հեռավոր Սիբիրի տաժանակրության բանտերից գրում էին՝ «Մեր վշտալի աշխատանքը չի կորչի իզուր»: Վերահաս հեղափոխությունների փոթորկալից նախօրեին՝ 1912 թ. Վ. Ի. Լենինը, մեծարելով դեկաբրիստներին, գրեց՝ «Նրանց գործը ապարդյուն չանցավ»[15]։

Այսօր, նշելով դեկաբրիստական ապստամբության 150-ամյակը, սիրով ու երախտագիտությամբ կարող ենք ասել՝ հիրավի, «նրանց գործը ապարդյուն չանցավ»:

Դեկաբրիստներին հաջորդեց ռուս հեղափոխականների երկու նոր սերունդ։ Հեղափոխական-դեմոկրատներ, որոնց «շրջանն ավելի լայն էր» և առավել «մոտ դարձավ նրանց կապը ժողովրդի հետ»[16]. առաջ տարան ու զարգացրին դեկաբրիստների հեղափոխական գաղափարները։ Սրանց հաջորդեց հեղափոխականների երրորդ սերունդը՝ ռուսական հերոսական բանվոր դասակարգը, որն իր մարտական կուսակցության գլխավորությամբ կործանեց ցարիզմը, կալվածատերերի և բուրժուազիայի իշխանությունը ու ցարական կայսրության փլատակների վրա կառուցեց աշխարհում առաջին սոցիալիստական հասարակարգը։

---

15 Նույն տեղում, հատ. 18, էջ 20։

16 Նույն տեղում։